4.2.	Վարկառուն պետք է կատարի Պայմանագրային վճարները Վճարման ժամկետում Վարկատուի բանկային հաշվին փոխանցում կամ որևէ այլ եղանակով վճարում կատարելով կամ կանխիկ վճարելով Մասնաձյուղում՝ նշելով վճարման մանրամասները. 1)Վճարման ժամկետը Հետաձգելու դեպքում՝ <<Հետաձգում, Պայմանագրի համարը>>, կամ 2) այլ Պայմանագրային վճարների դեպքում՝ Պայմանագրի համարը:	The Borrower shall make Contractual payments within the Payment term through payment card, non cash transfer or direct debit to the Lender's bank account or in cash at the Branch, in both cases specifying payment details 1) In the case of extension of the Payment date: "Extension, Contract number", or 2) In the case of other Contractual payments: "Contract number" .
4.3.	Վճարման օրվա հետաձգման համար Վարկառուն Վարկատուին վճարում է միայն Հետաձգման վճար, իսկ Վճարման օրը վճարվող Պայմանագրային վճարները հետաձգվում (կասեցվում) են և չեն հաշվարկվում Հետաձգման ժամկետի ընթացքում: Հետաձգված Պայմանագրային վճարների վճարումը Հետաձգման ժամկետի ընթացքում չի համարվում ուշացում:	If the Payment date has been extended, the Borrower, for the Extension period, shall pay to the Lender only the Extension fee, while the Contractual payments payable on Payment date, is postponed (suspended) for that period and not calculated for the Extension period. The repayment of the extended Contractual payments within the Extension period is not considered as delayed.
4.4.	Վարկառուն ցանկացած ժամանակ իրավունք ունի նախքան Վճարման ժամկետի ավարտը մասնակի կամ ամբողջությամբ մարելու (վերադարձնելու) Վարկի գումարը, Տոկոսագումարները և կատարելու այլ Պայմանագրային վճարները՝ համաձայն Օրենքի:	The Borrower is entitled to make full or partial repayment of the Loan, Interest of Loan and other Contractual payments any time before the last day of the Payment term in accordance with the Law.
4.5.	Վարկի վաղաժամկետ մարման դեպքում Վարկատուն հետ է վճարում Վարկի փաստացի չօգտագործված ժամկետի համար Վարկառուի կողմից նախապես վճարված Տոկոսները (առկայության դեպքում)՝ չօգտագործված ժամկետի համամասնությամբ: Նշված գումարը վճարվում է Վարկառուին վերջինիս գրավոր դիմումի հիման վրա (կանխիկ կամ փոխանցումով) 3 (երեք) բանկային օրվա ընթացքում:	In the case of premature repayment of the Loan the Lender shall be entitled to a proportional reduction of the Interest of Loan. Mentioned amount of the proportional reduction shall be given to the Borrower based on written request from the latter and in the manner (cash or transfer) as requested by the Borrower within 3 (three) banking days.

4.6.	Վարկառուի կողմից Պայմանագրային վճարները համարվում են կատարված Վարկատուի կողմից դրանց ստանալու պահից: Վարկառուի կողմից Պայմանագրի պայմաններին չհամապատասխանող վճարումը չի համարվում ստացված մինչև դրա նույնականացումը:	The Contractual payments made by the Borrower under the present Contract are considered fulfilled upon receipt by the Lender. The Borrower's payment not complying with the contractual provisions is not deemed to be received until the time of its identification.
4.7.	Վարկատուն, եռօրյա ժամկետում, Վարկառուին վերադարձնում է կիրառելի Պայմանագրային վճարների ավել վճարված մասը, նման վճարման պահից սկսած երեսնօրյա ժամկետում ներկայացված Վարկառուի գրավոր դիմումի հիման վրա և Վարկառուի կողմից նշված եղանակով:	The Lender within 3 (three) working days, returns to the Borrower the excess repaid amount upon the Borrower's written request presented within 30 days after overpayment and in the manner as requested.
4.8.	Վարկատուի նկատմամբ Վարկառուի Պայմանագրային վճարները (բացառությամբ 3.3.2 կետով սահմանված Լրացուցիչ վճարների) մարվում են հետևյալ հերթականությամբ՝ 1)Տույժեր (Վճարման ժամկետը խախտելու դեպքում), 2) Հետաձգման վճար՝ վճարման նպատակ դաշտում հստակ սահմանված լինելու դեպքում կամ, երբ մինչև Վճարման օրը ընկած 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում Վարկառուի կողմից կատարած առանձին վճարը բավարար չէ Պայմանագրային վճարների մնացորդն ամբողջությամբ մարելու համար, կատարվում է Վճարման օրվա հետաձգում հնարավոր առավելագույն օրերի քանակով՝ համաձայն Հատուկ պայմանների, 3) Տրամադրման վճար, 4) Տոկոսագումար, 5) Հատկացված վարկ:	The Contractual payments (except Additional fees described in Clause 3.3.2, which are not referred afterwards in the present Clause) of the Borrower in favor of Lender are extinguished in the following sequence: 1) Late payment interest; 2) Extension fee, if the Borrower stated respective payment as Extension fee or in case a separate repayment amount processed during 7 (seven) calendar days before the Payment day is not enough to fully repay all the outstanding Contractual payments, in the latter case the extension is proceeded for the possible maximum number of days according to the Special Terms; 3) Provision fee 4) Interest of Loan; 5) Loan payment(s).

5. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	RIGHTS AND OBLIGATIONS OF THE PARTIES
---	--

5.1.	<p>Վարկառուն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ համաձայն Օրենքի:</p> <p>Պայմանագրի լուծման դեպքում Վարկառուն պարտավոր է մարել (վերադարձնել) կիրառելի Պայմանագրային վճարները:</p> <p>Պայմանագրի միակողմանի լուծման համար Վարկառուն դիմում է ներկայացնում Վարկատուին՝ նշելով իր անունը, ազգանունը և Պայմանագրի համարը: Նման ծանուցման բացակայության դեպքում Պայմանագիրը չի համարվում լուծված:</p> <p>Սույն կետով սահմանված ժամկետի ավարտից հետո Վարկառուի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու դեպքում Վարկատուն, Օրենքին համապատասխան և Պայմանագրով և/կամ Սակագներով սահմանված դեպքերում և կարգով, կարող է Վարկառուի նկատմամբ կիրառել համապատասխան վճարներ:</p>	<p>The Borrower within 7 working days after conclusion of the Contract may make use of the right of refusal and to withdraw from the Contract without any argumentation, in accordance with Law. In such cases the Borrower undertakes to repay (return) all applicable Contractual payments. For making use of the right mentioned in this clause the Borrower submits a written notification to the Lender on the unilateral termination of the Contract by mentioning his/her name, surname and the Contract number. In case of failure to submit such notification, the Contract will not be considered as terminated.</p> <p>In case of unilateral termination of the Contract by the Borrower upon the expiration of the time limit set forth in this Clause, the Lender may according to Law apply respective fees in the manner and in cases prescribed by Contract and listed in the Contract and/ or Pricelist.</p>
------	---	---

5.2.	<p>Վարկառուի դիմումի հիման վրա կամ Վարկատուի նախաձեռնությամբ Վարկային գծի սահմանաչափը կարող է ավելանալ Հնարավոր վարկային գծի սահմանաչափի սահմաններում Վարկատուի կողմից Վարկառուի (վարկունակության) վճարունակության գնահատման միջոցով:</p> <p>Վարկատուն կարող է չավելացնել Վարկային գծի սահմանաչափը կամ պակասեցնել այն, եթե Վարկատուի կարծիքով Վարկառուի վճարունակությունը փոխվել է: Վարկային գծի</p>	<p>The Credit Line limit may be increased up to the Potential Credit Line limit upon the Borrower's application or at the initiative of the Lender, through assessment by the Lender of the Borrower's solvency (creditworthiness). The Lender may avoid to increase the Credit Line limit or to reduce the same, if at discretion of the Lender solvency of the Borrower has changed. The change of the Credit Line limit of the Borrower is done by the Lender unilaterally and can not affect the Granted Loan Amount or the repayment terms of the latter.</p>
------	--	--

	սահմանաչափի փոփոխությունը կատարվում է Վարկատուի կողմից միակողմանիորեն և չի կարող ազդել Հատկացված վարկի կամ դրա մարման պայմանների վրա:	
5.3.	Վարկատուն կարող է լուծել Պայմանագիրը և պահանջել Վարկառուից անհապաղ վաղաժամ վերադարձնել Հատկացված վարկը և վճարել այլ Պայմանագրային վճարները, եթե 1) Վարկառուն տրամադրել է ոչ ճիշտ, թերի, հնացած կամ ապակողմնորոշիչ տվյալներ, և/կամ կեղծ փաստաթղթեր կամ Վարկատուի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացրել Վարկատուի կողմից պահանջվող փաստաթղթերը, 2) Վարկառուն խախտել է Վճարման ժամկետը ավելի քան 7 օրացուցային օրով, 3) Վարկառուն խախտել է Պայմանագրով սահմանված իր որևէ այլ պարտավորություն, 4) նշանակալից հանգամանքներ փոխվել են, որոնք հանդիսացել են Պայմանագրի կնքման հիմք, 5) Վարկառուի դեմ դատարան հայց է ներկայացվել, նրա նկատմամբ հարուցվել է քրեական գործ, 6) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման որևէ կասկածի դեպքում, 6) ներկայացվել է նրան սնանկ ճանաչելու դիմում, 8) Պայմանագրի դադարման, այդ թվում՝ միակողմանի լուծման դեպքում, կամ 9) Վարկատուն գնահատել է Վարկառուի վճարունակությունը որպես անբավարար և Վարկառուի կողմից Հատկացված Վարկի վերադարձման բարձր ռիսկ է բացահայտել:	The Lender may withdraw from the Contract and the Borrower shall immediately repay (return) to the Lender in full amount the Granted Loan Amount and all other applicable Contractual payments, when 1) the Borrower has provided false data, incorrect, incomplete, obsolete or misleading information, or forged documents or failed to submit the documents requested by Lender during the period specified by the Lender, 2) the Borrower delays payment terms for more than 7 calendar days, 3) the Borrower breached any other obligation defined by the Contract, 4) significant circumstances has changed, which had constituted the basis for conclusion of the Contract, 5) a criminal case was started against the Borrower, 6) in case of any suspicions about possible money laundering and terrorism financing, 7) an application was submitted for recognizing the Borrower insolvent, 8) in case of termination of the Contract, including unilateral termination, 9) Lender assesses the creditworthiness of the Borrower as insufficient and reveals a significant risk of inability of the Borrower to repay the total amount of the Granted Loan Amount.
5.4.	Վարկատուն իրավունք ունի առանց Վարկառուի լրացուցիչ համաձայնության 1) Պայմանագրից բխող իրավունքները (պահանջները) և/կամ պարտականությունները փոխանցել ցանկացած երրորդ անձանց (ցեսիոնարներ), 2) ցեսիոնարները հետագայում իրավունք կունենան դրանք փոխանցել անսահմանափակ թվով երրորդ անձանց, 3) Վարկատուն և ցեսիոնարներն իրավունք ունեն վերոնշյալ երրորդ անձանց բացահայտել Պայմանագրի կնքման համար տրամադրված տեղեկությունները, 4) Վարկատուն և վերոնշյալ երրորդ անձինք պարտավոր չեն Վարկառուին տեղեկացնել նշված փոխանցման մասին, ուստի Վարկառուն պարտավոր է շարունակել կատարել Պայմանագրով սահմանված պարտավորությունները Վարկատուին, եթե Վարկատուն այլ բան չի ծանուցել Վարկառուին:	Lender has rights, without Borrowers prior additional consent 1) to assign rights (claims) and obligations arising from this Agreement to any third persons (assignees); 2) assignees shall be further entitled to assign these to an unlimited number of other third persons; 3) the Lender and assignees shall be entitled to disclose information provided for the signature of this Agreement to other third parties. 4) the Lender and assignees shall have no duties to notify the Borrower on the assignment to other third parties; therefore, it shall be duty of the Borrower to keep on performing the obligations under the Contract to the Lender unless the Lender notifies the Borrower otherwise.
5.5.	Վարկատուն իրավունք ունի ստեղծել Վարկառուի վարկային պատմություն նրա պարտավորությունների վերաբերյալ և կարող է այդ տեղեկությունները տրամադրել Վարկառուի այլ վարկատուներին և/կամ նոր պարտատերերին (ցեսիոնարների), այդ թվում ապագա:	The Lender may create the Borrower's credit history regarding the Borrower's liabilities, and may deliver the data regarding the Borrower to other lenders or new creditors (assignees) of the Borrower, including future.
6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ		OTHER PROVISIONS
6.1.	Վարկառուն հաստատում է, որ ներկայացնում է լիարժեք տվյալներ, որոնք անհրաժեշտ են իր հետ կապ հաստատելու համար և, որ իր կողմից Վարկատուին տրամադրված հասցեները, Էլ-փոստը, Հեռախոսահամարը և կապի այլ միջոցները վերահսկվում են իր կողմից և դրանցով հնարավոր է արդյունավետորեն կապվել իր հետ: Վարկառուն	The Borrower confirms, that presents complete information, that is necessary to contact with him, and the addresses, E-mail, Telephone number and other means of communication provided by him/her to the Lender are controlled by him/her and it can be effectively communicated with him/her by them. The Borrower shall properly notify to the Lender changes to the Borrower's

	<p>պետք է պատշաճ կերպով ծանուցի Վարկատուին Պայմանագրում նշված իր տվյալների, անձը հաստատող փաստաթղթի և/կամ աշխատավայրի փոփոխության մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ քան Վարկատուի հետ ցանկացած նոր գործարքից առաջ՝ կրելով վերջինից բխող ռիսկերը:</p> <p>Վարկատուն պատասխանատվություն չի կրում Վարկառուի տրամադրած կապի միջոցներով տեղեկություններ ուղարկելու հետևանքով բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների բացահայտման համար:</p>	<p>information specified in the Contract, personal identity document or work place within 5 working days, not later than before any new transaction with the Lender, undertaking all risks deriving from it.</p> <p>The Lender shall not be liable for disclosure of information constituting bank secrecy as a result of sending information through the communication means provided by the Borrower.</p>
6.2.	<p>Վարկատուն կարող է պահանջել Վարկառուից 1) հաստատել տվյալների փոփոխությունը հեռախոսով՝ Հեռախոսահամարի օգտագործմամբ կամ Պորտալում, Մասնաճյուղում կամ Վարկատուի կողմից ընդունելի այլ եղանակով, 2) հավելյալ տեղեկատվություն և փաստաթղթեր՝ կապված Պայմանագրի և Վարկի տրամադրման և հետագա սպասարկման հետ, 3) տեղեկատվություն կապված Վարկառուի վճարունակության հետ, 4) տեղեկատվություն՝ կապված Վարկառուի նույնականացման և/կամ Վարկառուի դրամական միջոցների հետ՝ մինչ վերոնշյալ տեղեկատվության տրամադրումը չկատարելով պահանջվող գործարքը: Վարկառուի հաշվի փոփոխությունը կատարվում է բացառապես Մասնաճյուղում՝ Վարկառուի ստորագրությամբ:</p>	<p>The Lender may request from the Borrower at Lender's own discretion and / or in accordance with Law: 1) the Borrower's approval of the information change through telephone, by using Telephone number or on the Portal, in the Branch and/or otherwise, 2) additional information and documents related to the implementation of the present Contract and provision of the Loan, 3) information related to the Borrower's creditworthiness (solvency), 4) information related to the identification of Borrower and/or the monetary means of the Borrower, and in cases listed before the Lender may refuse to fulfill requested transaction until full provision of requested information.</p> <p>The changes of the Borrowers account can be made only in Branch with Borrowers signature.</p>
6.3.	<p>Վարկառուի անհատականացումը կամ նրա հետ Պայմանագրի սահմաններում հաղորդակցությունը (գրավոր տեղեկացում, հիշեցում, առաջարկ, պահանջ, հաստատում, մերժում և այլն) պարտավորեցնող է Կողմերի համար, եթե այն տեղի է ունեցել Մասնաճյուղում առերես, Հեռախոսահամարի, Վարկառուի Էլ-փոստի կամ Պրոֆիլի միջոցով: Սպասարկման որակը բարձրացնելու և գործարքների անվտանգությունն ապահովելու համար Վարկատուն իրավունք ունի ձայնագրել, տեսագրել, էլեկտրոնային եղանակով կամ այլ կերպ պահպանել Վարկառուի հետ հարաբերությունների ընթացքի մասին տվյալները: Վարկառուն ընդունում է, որ վերոհիշյալ տեղեկությունները ծառայում են որպես ապացույց վիճելի հարցերի կարգավորման համար:</p>	<p>The communication (written notifications, reminders, proposals, suggestions, requests, approvals, rejections etc.) between the Parties in relation with the implementation of the present Contract shall be done personally in Branch or by telephone call on the Telephone number, via Borrower's email or through the Profile on the Portal. Any communication made in the above stipulated manner should be binding for the Parties.</p> <p>With the purpose to improve the quality of services and ensure the security of transactions the Lender remains the right to record, videotape, electronically or otherwise retain data about the relationship with the Borrower. The Borrower acknowledges that this information serves as evidence for the settlement of disputes.</p>
6.4.	<p>Վարկառուն, իրավունք ունի ստեղծել Պրոֆիլ Պորտալում՝ Պորտալի Օգտագործման Պայմանների համաձայն: Այն դեպքում, երբ Վարկառուն առաջին անգամ հայտ է ներկայացնում մասնաճյուղում կամ Հեռախոսահամարի միջոցով զանգ կատարելով, ավտոմատ կերպով գրանցվում է Պրոֆիլ, որը ակտիվանում է միայն Վարկառուի կողմից գաղտնաբառի վերականգնումից հետո, որը կատարվում է Վարկառուի Էլ-փոստի կամ Հեռախոսահամարի միջոցով: Վարկառուի անհատականացումը և նրա հետ հաղորդակցությունը պարտադիր է Կողմերի համար, եթե Պրոֆիլի օգտագործման կանոնները հաստատվել են Վարկառուի կողմից Պորտալում գործող Պրոֆիլի ակտիվացման միջոցով (ակտիվացման պահից)՝ նշված կանոններով սահմանված կարգով: Պորտալի Օգտագործման</p>	<p>The Borrower is entitled to create a Profile on the Portal in accordance with the Terms and Conditions for use of the Portal, available on the Portal. In case the Borrower submits the first Application at Branch or by calling via Phone number the Profile is created automatically and is activated only after the password recovery by the Borrower via Email address or Phone number. The Borrower's identification and communication with the Lender shall be binding for the Parties provided that the Borrower through Profile on the Portal will have approved the Terms and Conditions for use of the Portal by activating the Profile in the Portal (upon activation) as defined by the mentioned rules. The Terms and Conditions for use of the Portal are available in the Portal and are considered as an integral part of the Contract.</p>

	Պայմանները հասանելի են Պորտալում և կազմում են Պայմանագրի անբաժանելի մասը:	
6.5.	Վարկատուն կարող է կասեցնել կամ դադարեցնել Վարկառուի անհատականացումը և/կամ իր հետ հաղորդակցությունը հեռախոսով՝ Հեռախոսահամարի օգտագործմամբ կամ Պորտալում Պրոֆիլի միջոցով և պահանջել, որ որոշակի գործողություններ կատարվեն բացառապես Մասնաձյուղում:	The Lender may suspend or terminate the Borrower's identification and/or communication through telephone, by using the Telephone number, or through the Profile on the Portal and to require that particular activity is made in the Branch.
6.6.	Այն դեպքում, երբ համաձայն Հատուկ Պայմանների Վարկառուն ընտրում է Օրենքով սահմանված պարտադիր ներկայացման տեղեկատվությունը էլեկտրոնային եղանակով ստանալու տարբերակը, ապա ծանուցումը համարվում է ստացված Վարկատուի կողմից Վարկառուի էլ-փոստին ուղարկվելու, կամ Հեռախոսահամարին հաղորդագրություն կամ զանգ կատարելու կամ Պորտալում Պրոֆիլի միջոցով ներկայացնելու միջոցով: Ընդ որում տեքստային հաղորդագրությունը համարվում է ստացված Վարկատուի կողմից համապատասխան տեղեկատվական համակարգում այն մուտքագրելուց հետո:	If the Borrower according to Special Terms selected the electronic method of receiving information subject to obligatory submission as defined by Law and the Contract, then the notification is considered received by the Borrower within the framework of the Contract by e-mail on Borrower's e-mail and/ or telephone (using Telephone number) as recorded oral notifications or text messages, moreover the notification sent by e-mail or text message is considered as received upon the moment of entering of the electronic communication in the informational system indicated by the Borrower.
6.7.	Եթե Կողմերի միջև ծագած վեճը չի լուծվում բանակցությունների միջոցով, ապա այն լուծվում է դատարանի կողմից օրենքով սահմանված կարգով: Սույնով Կողմերը համաձայնում են, որ Պայմանագրից բխող վեճերով գործերի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել: Կողմերը համաձայնում են, որ Պայմանագրից բխող վեճերով հայցերը Վարկատուի ընտրությամբ կարող են հարուցվել ՀՀ ցանկացած իրավասու դատարան: Կողմերը նաև տալիս են իրենց համաձայնությունը վեճերի դատական կարգով քննության դեպքում գործով արագացված դատաքննության կիրառման համար: Վարկառուն իրավունք ունի նաև դիմել ՀՀ Ֆինանսական համակարգի հաշտարարին օրենքով սահմանված կարգով և դեպքերում: Սույնով Վարկառուն տեղեկացվում է, որ Վարկատուն չի կնքել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր:	If dispute between the Parties is not resolved via negotiations, it shall be resolved by the court under procedure prescribed by Law. Upon this the Parties agree to change the jurisdiction on disputes derived from the Contract. The Parties agree that the actions on disputes derived from the Contract are brought at any competent court of RA. The parties also give their consent to the use of accelerated litigation in the event of a dispute under judicial procedure. The Borrower is also entitled to apply to RA Financial System Mediator in cases and in the manner stipulated by Law. Upon these General Terms the Borrower is notified that the Lender did not sign an agreement waiving the right to appeal against decisions of the Financial System Mediator.
6.8.	Վարկատուն իրավունք ունի միակողմանի փոփոխություններ կատարել Պայմանագրում, մասնավորապես Ընդհանուր պայմաններում, Հատուկ պայմաններում, Սակագներում և Կողմերի Պայմանագրային հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերում: Այդ մասին Վարկատուն տեղեկացնում է Վարկառուին նրա հետ համաձայնեցված եղանակով, այդ թվում Պրոֆիլի միջոցով՝ համապատասխան փոփոխությունն ուժի մեջ մտնելուց 7 (յոթ) աշխատանքային օր առաջ ծանուցում ուղարկելով: Օրենքով թույլատրելի դեպքերում սույն կետով սահմանված ծանուցումները համարվում են պատշաճ կատարված Պորտալում սահմանված կարգով հայտարարություն հրապարակելու միջոցով: Նշված փոփոխությունները համարվում են Վարկառուի կողմից ընդունված, երբ Վարկառուն մինչև դրանց ուժի մեջ մտնելը գրավոր չի առարկում նշված փոփոխությունների դեմ,	The Lender is entitled to make changes in Contract. The Lender notifies the Borrower about these changes in the manner agreed with him, including through the Portal, 7 (seven) working days prior to their entry into force. Where permitted by Law, notifications specified in this paragraph shall be deemed properly done through their publication in the Portal. The mentioned changes are considered as accepted by the Borrower when the latter does not object before their entry into force in written form, as well as in all the cases when a new Application is submitted after the publication of the mentioned changes. The Borrower authorizes and instructs the Lender to take all necessary action to put into effect all changes, which are in his favour and/or immaterial (correction of errors, spelling, arithmetic and other mistakes, reduction or elimination of contractual fees, service name, text editing, etc.) without his additional consent or signature.

	<p>ինչպես նաև բոլոր այն դեպքերում, երբ նշված փոփոխությունների հրապարակումից հետո նոր Հայտ է ներկայացնում:</p> <p>Վարկառուն լիազորում և կարգադրում է Վարկատուին ձեռնարկել անհրաժեշտ բոլոր գործողությունները՝ ի շահ Վարկառուի կամ ոչ էական բնույթ կրող (թվաբանական սխալների, տառասխալների և այլ վրիպակների ուղղում, ծառայությունների անվանումների խմբագրումներ, ծառայությունների վճարների նվազեցում կամ վերացում, տեքստի խմբագրումներ և այլն) բոլոր փոփոխություններն ուժի մեջ դնելու համար՝ առանց Վարկառուի լրացուցիչ համաձայնության կամ ստորագրության:</p>	
6.9.	Վարկատուն պատասխանատվություն չի կրում, եթե սույն պայմանագրային դրույթները խախտվել են երրորդ անձանց կողմից իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով:	The Lender is not liable if these contractual provisions were violated due to non-performance or improper performance of their duties by third parties.
6.10.	Վարկառուն սույնով հաստատում է, որ Պայմանագրով հանդես գալով որպես Գողմ, հանդիսանում է իրական շահառու:	The Borrower hereby certifies that as the Party of the Contract he/ she is a real beneficiary.
6.11.	Վարկառուն նաև թույլատրում է Վարկատուին մշակել և ստուգել իր կողմից տրամադրված տվյալները՝ այդ նպատակով հարցումներ կատարելով և տեղեկություններ տրամադրելով էլեկտրոնային տվյալների շտեմարաններ, և այլ անձանց՝ Վարկատուի և Վարկառուի միջև կնքված պայմանագրերի գործողության ընթացքում և դրանից հետո:	The Borrower entitles the Lender to collect, process and check the data provided by him by making inquiries and providing information to electronic databases and others, during and after the Contract.
6.12.	Վարկառուն տեղեկացված է և համաձայն է, որ Վարկատուն իրավունք ունի փոխանցել Պայմանագրից բխող պարտավորությունները Վարկատուի հետ փոխկապակցված անձին կամ խմբին՝ առանց Վարկառուի լրացուցիչ համաձայնության:	The Borrower is informed and agrees that the Lender is entitled to transfer all obligations under the present Contract to Lender's associated or group companies without Borrower's additional consent.

Անվանում՝ ՎԱՐԿՄ ԷՅ ԷՍ ՈՒՎԿ ՓԲԸ

ՀՎՀՀ՝ 02654818

Հասցե՝ ՀՀ., ք. Երևան, Սարյան 12

Բանկ՝ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ

Հ/Հ՝ 11500586907469 ՀՀ դրամ

Բանկ՝ ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ ՓԲԸ

Հ/Հ՝ 163007880079 ՀՀ դրամ

Բանկ՝ ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ ՓԲԸ

Հ/Հ՝ 220559690015000 ՀՀ դրամ